# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2005 թվականի մարտի 9-10-ը Մոսկվայում տեղի ունեցավ Ռուսական IX Համաշխարհային համաժողովը: Այս համաժողովին հրավիրված էին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, ինչպես նաև Տ. Արիստակես քհն. Հովհաննիսյանը: Համաժողովն առավելապես նվիրված էր Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 60-ամյա հոբելյանին, ինչպես նաև նպատակ ուներ համակողմանիորեն քննարկել բազմազգ և բազմակրոն Ռուսաստանի առջև այսօր ծառացած խնդիրները և միասնաբար որոնել դրանց առավել արդյունավետ լուծման եղանակները: Համաժողովը հանդիսապետում էր Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդը: Ժողովի սկզբում ընթերցվեցին նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և պետական ու կառավարական բարձրաստիճան ղեկավարների ուղերձները:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*
*ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ*